ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Արագածոտնի մարզ, Մեծաձոր համայնք, գ.Մեծաձոր, 1-ին փողոց, տուն 10
էլ.փոստ՝ metsadzor.aragasotn@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2026թվականի N 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07 ՄԱՅԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 6-րդ մասի պահանջով, համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մեծաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 07-ի հերթական հինգերորդ նիստի օրակարգը.

1. Մեծաձոր համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման վերահսկողությունը իրականացնելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՍՅԱՆ ՍՈՒՏԱԼ

ՇԱՄՈՅԱՆ ԹՈՌՈՒՆ

ՇԱՄՈՅԱՆ ՀԵՐԻՔ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՐԱՋ ՄԻՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Արագածոտնի մարզ, Մեծաձոր համայնք, գ.Մեծաձոր, 1-ին փողոց, տուն 10
էլ.փոստ՝ metsadzor.aragasotn@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2026թվականի N 18- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԱՑԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՈՒ ԱՅԼ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի ա) բ) գ) դ) ե) կետերի պահանջներով, համայնքի ավագանին

որոշում է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի բյուջեի կատարման և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման վերահսկողությունն իրականացնել ավագանու կողմից կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով՝ ժամկետ՝տարին մեկ անգամ, 4-րդ եռամսյակի ընթացքում:

2. Համայնքի բյուջեի վերահսկողության իրականացման ընթացքում կատարել՝

ա)բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը,

բ)բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը, (առկայության դեպքում),

գ)բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը,

դ) բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը,

ե) բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՍՅԱՆ ՍՈՒՏԱԼ

ՇԱՄՈՅԱՆ ԹՈՌՈՒՆ

ՇԱՄՈՅԱՆ ՀԵՐԻՔ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՐԱՋ ՄԻՐՈՅԱՆ